

Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ



Կրակէ մարդը




Written by: Edward Hughes
Illustrated by: Lazarus; Alastair Paterson
Adapted by: E. Frischbutter
Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife
gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.
Produced by: Bible for Children
www.M1914.org


BFC
PO Box 3
Winnipeg, MB R3C 2G1
Canada

©2021 Bible for Children, Inc.
License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.

Ամեն ինչ գէշ կ'երեւեր Իսրայելի համար: Թագաւոր
Եւ թագուհին կ'ատէին Աստուծոյ: Ինչ գէշ օրինակ:
Շուտով ժողովուրդն ալ ատեց Աստուծոյ Եւ սխալ
աստուածներ սկսաւ պաշտել: Կա՞ր անձ մը, որ կը
սիրէր Աստուծոյ:




Այո՛, քանի մը հաւատացեալ պաշտողներ կային: Օր մը, Աստուած անոնցմէ մէկուն խօսեցաւ, որուն անունը Եղիա էր:




3

Եղիա ըսաւ չար Ագաաբ թագաւորին. "Ինչպէս որ Տէր Աստուածը Իսրայէլ կ'ապրի, ցող կամ անձրեւ պիտի չգայ Իսրայէլի վրայ այս տարիները, բայց միայն իմ հրամանովս եւ խօսքերովս":




4

Այս սով կը նշանակէր: Աստուած չէր կրնար ձգել Իսրայէլի իր ժողովուրդը, որպէսզի չարութեան մէջ ապրին:



5




Թագաւորին գգուշացնելէ ետք, Աստուած Եղիան դրկեց լուռ տեղ մը երկրին մէջ: Հոն Եղիան

սպասեց: Աստուած ագռաւ դրկեց, որ զինք կերակրէ: Ասոնք հաց եւ միս կը բերէին, ցերեկ եւ երեկոյ: Եղիան առուակէն կը խմէր:

6

Ժամանակ մը ետք առուն չորացաւ, որովհետեւ անձրեւ չկար: Աստուծոյ խօսքը



կ'իրականանար: Ամբողջ երկիրը կը ցամքեր ջուրի պակասէն: Հունձքերը չէին մեծնար: Ժողովուրդը անօթի էր: Թերեւս Եղիան մտածեց, թէ ինչ կարող է իրեն ըլլալ հիմա որ ջուր չկար:

7

Աստուած ըսաւ Եղիային. "Ոտքի ել, գնայ Սարիփթա եւ հոն ապրիր: Տէր, ես հրամայեցի այրի կնկայ մը, որ քեզի հոգ տանի": Աստուած գիտեր իր ծառայիս պետքերը:



8



Բայց այս տարօրինակ միջոց մըն էր հոգ տանելու: Պարզութեամբ, Եղիան հնազանդեցաւ Աստուծոյ: Երբ ան հասաւ Սարիփթա, այրի կիներ քաղաքի դրան առջեւ կրակի

համար չոր ճիւղեր կը հաւաքէր:

9


"Չաճիս գաւաթ մը ջուր բեր ինծի", Եղիա խնդրեց կիներէ: "Չաճիս նկանակ մըն ալ հաց": "Ես հաց չունիմ", պատասխանեց այրին: "Միայն քիչ մը ալիւր եւ քիչ մըն ալ ձեթ ունիմ":

Տխրած, կիներ ըսաւ մարգարէին, թէ երբ ասուք ալ կը սպասեն ինքը եւ իր տղան անօթի պիտի մեռնին:



10

"Մի վախնար: Ինծի նախ պզտիկ կարկանդակ մը պատրաստէ եւ ետքը քեզի եւ քու տղուդ", ըսաւ Եղիա: "Ալիւրը եւ ձեթը պիտի չսպառին մինչեւ այն օրը երբ Տէրը անձրեւ պիտի բերէ աշխարհին": Աստուած հրաշք մը պիտի գործէ այդ բանը պատահելու համար: Եւ ան գործեց, կիներ եւ իր տղան կերան շատ օրեր, եւ ալիւրին ամանը չէր չորնար:



11

Եղիա անոնց հետ ապրեցաւ: Օր մը տխուր դէպք մը պատահեցաւ: Այրի կնկան տղան մեռաւ: Եղիա շալկեց տղուն մարմինը եւ վերի սենեակը հանեց:

Ան պռռաց Տիրոջ ըսելով.

"Ով Տէր իմ Աստուածս, ես կ'աղօթեմ, թող որ մանուկին հոգին վերադառնայ իրեն": Այս ինչ անկարելի աղօթք:




12

Տէրը լսեց Եղիայի ձայնը եւ տղուն հոգին վերադարձաւ իրեն եւ ան վերաքնակեցաւ: Երբ Եղիա առաւ պզտիկը եւ մօրը տուաւ կիներ ըսաւ. "Չիմա ասոր հետ գիտեմ, թէ Տիրոջ խօսքը քու բերնիդ մէջ իրականութիւնն է":



13

Երեք տարի ետք, Աստուած Եղիան դրկեց թագաւորին ըսելով. "Ես անձրեւ պիտի դրկեմ աշխարհին":




14

Ագաաբի՞ քով երթալ: Իր կինը Յեզաբել արդէն սպաններ էր Աստուծոյ մարգարէները: Սակայն Եղիա չվիճեցաւ: Ան Ագաաբ թագաւորին քով գնաց:




15

Երբ երկու մարդիկ հանդիպեցան, Եղիա պայման դրաւ Ագաաբին, որ հաւաքէ ամէն հարայելը եւ 850 կեղծ մարգարէները: Գարմել կոչուող լեռան վրայ, Եղիա խօսեցաւ ժողովուրդին: "Եթէ Տէրը Աստուածն է, իրեն հետեւեցէք":




16

Եղիա երկու արդէն երկու խոյր պատրաստեր էր զոհ մատուցանելու, համար: Սակայն կրակ պիտի չգործածուի այրելու զանոնք: "Դո՛ւք կանչեցէք ձեր աստուածները, եւ եւս Տիրոջ անունը պիտի կանչեմ", ըսաւ ան: "Եւ այն Աստուածը, որ կրակով կը պատասխանէ Ինքն է Աստուածը", "Շատ լաւ խօսք է", պատասխանեց ժողովուրդը:



17


Առտուրնէ մինչեւ իրիկուն կեղծ մարգարէները կը կանչէին իրենց կեղծ չաստուածները: Անոնք կը հաւաքուէին, կը պարէին եւ իրենք զիրենք դանակներով կը վիրաւորէին մինչեւ որ արիւն քար, բայց որեւէ կրակ չէղաւ:



18

Ետքը Եղիա զոհերը եւ կրակը շուրին մէջ թաթխեց եւ աղօթեց: "Ո՛վ Տէր, լսէ ինձի, որ այս ժողովուրդը գիտնայ, թէ դուն ես Տէր Աստուածը...": Այդպէ տոջ Տիրոջ կրակը իջաւ:

Այրեց եզները եւ տախտակները եւ ետքը այրեց ժայռէ խորանը:



19

Երբ ժողովուրդը տեսաւ ասիկա, անոնք պորռացին. "Տէրը ինքն է Աստուած" եւ Եղիա ըսաւ. "Ձերբակալեցէք Պաալի մարգարէները: Մի՛ ձգէք մէկը փախչի."



20

Եղիա ըրաւ ան ինչ որ Ագաապ թագաւոր պետք էր ըրած ըլլար երկար ժամանակէ առաջ: Ան սպաննեց բոլոր կեղծ մարգարները:



21

Ետքը Աստուծոյ ծառան ըսաւ Ագաաբի, որ անձրեւը ճամբուն վրայ է: Շուտով պզտիկ ամպ մը երեւցաւ: Պիտի անձրեւէ՞ր: Երեք տարի չարութենէ ետք:



22

Քիչ ժամանակ ետք, երկինքը սեւցաւ եւ ամպերով լեցուցաւ, զօրաւոր հոպ մըն ալ սկսաւ փչել եւ զօրաւոր անձրեւ սկսաւ: Աստուած անձրեւ դրկեց: Աստուած զայն տուաւ ժողովուրդին, թէ Եղիա իրականութիւնը կ'ըսէր անոնց: Աստուած ցոյց տուաւ, որ ինքը միակ եւ իրաւ Աստուածն է:




23

Կը կարծե՞ս, որ Ագաաբ թագաւոր պատուեց Աստուծոյ եւ իր ծառային եւ Եղիայի: Ո՛չ: Այլ Յեզաբել փորձեց Եղիան մեռցնել, բայց ան փախչեցաւ: Վերջաւորութեան, Ագաաբ մեռաւ պատերազմի մը ընթացքին եւ իր ծառաները Յեզաբելը պալատի բարձր պատի մը վրայէն վար հրեցին: Ան վար ինկաւ եւ ջախջախուեցաւ ժայռերուն վրայ:



24



Ի՞նչ եղաւ Եղիայի: Օր մը Աստուած, կրակէ ձիերով կրակէ սայլ մը դրկեց եւ Եղիայի, Աստուծոյ կրակէ մարդը փոթորիկով դէպի երկինք բարձրացուց:

25

կրակէ մարդը


Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

1 Թագաւորաց 17 - 19, 2 Թագաւորաց 2

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130

26



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գեշ բաներ ըրած ենք, որոնք հնք մեզ կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի էաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր: Յովհաննու 3:16